

Չ. Մ. Միրզաբեկյան

Մ. ԹԱՂԻԱԴՅԱՆԸ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ հասարակական մտքի պատմության մեջ 19-րդ դարի առաջին կեսը գրավում է յուրահատուկ տեղ: Հայաստանի արևելյան մասի ազատագրումը Ռուսաստանի կողմից, հայ ժողովրդի տնտեսական-կուլտուրական առաջընթացը, նրա ավելի սերտ կապերը ռուսական կուլտուրայի հետ, աշխուժություն են առաջացնում հայ ժողովրդի հասարակական կյանքում: Կուլտուրական տնտեսական կյանքի այդ աշխուժացմանը արձագանքում են Հայրություն Ալամդարյանը և ապա լուսավորիչ-դեմոկրատներ Մ. Թաղիադյանն ու Խ. Աբովյանը: 19-րդ դարի իրականության մեջ տեսնելով ժողովրդի հետամուր-նացությունն ու տնտեսական ճնշումը, նրանք գտնում են, որ պետք է լուսավորել հայ ժողովրդին, նրան դուրս բերել խավարի ճիրաններից, որի համար հարկավոր է զինվել խորը և առաջավոր գիտելիքներով:

Գնալով Հնդկաստան, Թաղիադյանը սովորում է մի շարք լեզուներ, կարդում է եվրոպական մեծ գրողների՝ Շեքսպիրի, Բայրոնի, Դիկկենսի և շատ ուրիշների երկերը, մոտիկից ծանոթանում առաջավոր կուլտուրային: Զինված դիտության մեծ պաշարով, Թաղիադյանը վերադառնում է Հայրենիք, որպեսզի իր ամբողջ ուժն ու կարողությունը նվիրի իր սիրելի ժողովրդին, բայց դեմ առնելով ժամանակի պահպանողական և հետադեմ մարդկանց դիմադրությունը, իր առաջավոր գաղափարների համար հալածվելով, նորից իր ձեռքն է վերցնում պանդխտության ցուլը:

Հայ իրականության մեջ Մ. Թաղիադյանն առաջիններից էր, որ ծառացավ ճորտատիրական կարգերի դեմ, քննադատեց այդ կարգերի հետամնացությունը: Թաղիադյանի ստեղծագործության միջով կարմիր թելի նման անցնում է նրա հայրենասիրությունը, նրա անսահման նվիրվածությունը իր ժողովրդին ու հայրենիքին:

Մ. Թաղիադյանը առաջիններից էր, որ արձագանքեց Հայաստանի ազատագրմանը Ռուսաստանի կողմից և բարձր գնահատեց առաջադեմ ռուս ժողովրդի տնտեսական ու կուլտուրական ազդեցությունը հայ ժողովրդի կյանքում: Երևանցիներին գրած իր հուշակավոր նամակում Թաղիադյանն առաջինը ողջունեց Հայաստանի ազատագրումը:

Թաղիադյանը ոչ միայն տեսնում էր հայ իրականության արատավոր կողմերը, այլև ճորտատիրական և կապիտալիստական աշխարհի թերությունները և քննադատում այն: «Ճանապարհորդություն ի Պարսս» գրքում նա վրշտանում է պարսիկ աշխատավորության կեղեքումով ու շահագործումով իր իսկ տերերի կողմից: «Ազգասեր»-ի էջերում գովելով Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների ըմբոստացումը եվրոպական ստրկատերերի դեմ, զայրույթ է հայտնում ֆրանսիական տիրակալության նկատմամբ, որը քարայրում խեղդել է իրենց ազատության համար պայքարող հարյուրավոր ալժիրցիների: «Ազգասեր»-ի բազմաթիվ էջերում գովասանքով է խոսում հնդիկ ապստամբ-

ների մասին և պախարակում անգլիական կեղծ մարդասիրությունը, անգլիական ստրկավաճառությունը:

Մ. Թաղիադյանի գրական ստեղծագործությունը, մանկավարժական, հրապարակախոսական գործունեությունը և հասարակական-քաղաքական հայացքները իր ժամանակին հասարակության տարբեր խավերի կողմից, բնականաբար, ստացել են տարբեր մեկնաբանում և տարբեր ու հակասական ձևով են արժեքավորվել:

Լինելով մեծ էրուդիցիայի տեր անձնավորություն, ունենալով հասարակության արատավոր կողմերը անմիջապես բնկալելու և տեղնուտեղը քննադատելու կարողություն, երգիծանքի ժպիտը միշտ դեմքին, նա իր կենդանության օրոք ունեցել է բարեկամների և թշնամիների մեծ բանակ: Ամենուրեք, թե՛ Հնդկաստանում և Նոր Զուդայում, թե՛ էջմիածնում և Պոլսում հասարակության առաջավոր խավերը ջերմ բնորոշելություն էին ցույց տվել, իսկ հետագեմ խավերը հալածել ու հետապնդել են նրան:

Չավելելով նրա գիտության ուժը, տեսնելով նրա կարողությունը, առաջավոր հայացքներով նրա զինվածությունը, նկատելով սուր երգիծանքը դեպի սոցիալական ու հեռամենացությունը, չհանդուրժելով նույնիսկ տարազի նորաձևությունը, էջմիածնի տղետ հոգևորականությունը առաջին իսկ հայացքից թշնամաբար է տրամադրվում դեպի հայրենիքի համար ամեն ինչ զոհող մեծ գործիչը և սկսում է իր դավերն ու հալածանքը, մինչև որ հաջողում է նրան հեռացնել էջմիածնից:

Սակայն հայ կյանքի առաջավոր գործիչ և մեծ զավակ, լուսավորիչ դեմոկրատ Խ. Աբովյանը այլ մոտեցում է ցույց տվել Թաղիադյանի գործունեությունը:

Աբովյանը եղել է Թաղիադյանի լուսավորական գործունեությունը գնահատողներից առաջինը: Հեռու Դորպատում (այժմ Տարտու) ստանալով Մսեր Մսերյանի 1832 թ. հունվարի 25-ին գրած նամակը, որում վերջինս հաղորդում էր, որ Թաղիադյանը Հնդկաստանից վերադարձել է և հայրենիքի որդիներին լուսավորելու համար ջանք է դնում Վաղարշապատի ավերակներում դպրոց բանալու, Աբովյանը նամակ է գրում կաթողիկոս Հովհաննես Կարբեցուն և մեծ նշանակություն տալիս Թաղիադյանի նախաձեռնությունը: Նա գրում է. «...Ձմինն ահա ունիք ի ներկայություն, զՄեսրոպ Թաղիադեանն, Նդիցին ընկերեք նորա բազում: Գանձք ձեզ Նդիցի որդիք Հայաստանի և լուսավորութիւն նոցա ձեզ փառք անմոռանալի»¹:

(1832 թ. մարտ 2, Դորպատ):

Մ. Թաղիադյանի լուսավորական, հրապարակախոսական և մանկավարժական գործունեությունը արժանացել է հայ մեծ ուղղության-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի ուշադրությանը: Ափսոսալով և քննադատելով, որ Մ. Թաղիադյանը դրականությունը ժողովրդի լայն խավերին մատչելի դարձնելու գաղափարով հանդերձ չհասավ այն պարզ ճշմարտությանը, որ անցել է, գրաբարի դարը, որ գրաբարը անմատչելի է ժողովրդական լայն խավերին և պետք է գրել աշխարհաբար լեզվով, միաժամանակ բարձր է գնահատում Թաղիադյանի պայքարը ճորտատիրական կարգերի դեմ:

¹ Ն. Տ ե ր - Կ ա ր ա պ և տ յ ա ն, Խ. Աբովյան, էջ 262:

Այդ առթիվ Մ. Նալբանդյանը գրում է. «Խեղճ Թաղիադյանց, խաղաղությունն քո հոգուն, շարժարվեցար ազգի լուսավորության համար, բայց չհաջողվեցավ, որպես և շաաերուն տեսանել քո մարդարեական ազգու քարոզության պտղաբերությունը մեր ազգի մեջ»²։

Մեր գրականության դեմոկրատական թևի ներկայացուցիչները հանձինս նրա տեսել են 19-րդ դարի առաջին կեսի հայ մտքի վերածնության արտահայտիչներից մեկին, տեսել են նրա հայացքների առաջավոր ու դեմոկրատական կողմը, գրականությունը ժողովրդի շահերին ծառայեցնելու նրա ջանքերը։ Կարդալով ոմն անհայտ կենսագրի թշնամական տողերը Մ. Թաղիադյանի կյանքի և գրական գործունեության մասին, Պ. Պոռյանը զայրույթով է լըցվում դեպի շարախոսը։ Պոռյանն առանձնապես շեշտում է Մ. Թաղիադյանի հայրենասիրությունը։

Եթե կյանքում Մ. Թաղիադյանը որևէ անձնական թերություն ունեցել է, ասում է Պ. Պոռյանը, ապա դա ոչնչով չպետք է ազդի նրա ստեղծագործության վրա, որը կմնա մեր գրականության ոսկե ֆոնդում։

Հայ մեծանուն վիպասան Բաֆֆին բարձր է գնահատում Թաղիադյանի անունը։ Շիրվանզադեն Բաֆֆուն նվիրված իր հուշերում գրում է, որ նա մեծ գովասանքով էր խոսում Թաղիադյանի մասին, որի «Սոս և Սոնդիպին» համարում էր առաջնակարգ ստեղծագործություն հայկական գրականության մեջ և վրդովվում էր, որ հայ հասարակությունը լավ չի ճանաչում այդ բանաստեղծին։

(Տես «Հորիզոն», 1894, էջ 142)

Բաֆֆին գրում է. «Խղճալի Մ. Թաղիադյանցը աստանդական մինչև Զեդեգանի հասավ, վերջն Պարսկաստանի քաղաքում ավանդեց յուր շնաշխարհիկ հոգին»³։

Մեծ դրամատուրգ և վիպասան Ալ. Շիրվանզադեն իր հերթին բարձր է գնահատում Մ. Թաղիադյանի ստեղծագործության արժանիքները։ Շիրվանզադեն նրան համարում է 19-րդ դարի առաջին կեսի ամենատաղանդավոր բանաստեղծներից մեկը և ամենասրամիտը։ Վերլուծելով «Հանդես գրական և պատմական» հանդեսում տպագրված Մ. Թաղիադյանի «Ցուցակ աղխից տան իմ» երգիծական բանաստեղծությունը, Շիրվանզադեն գրում է, որ այն մի ստեղծագործություն է, որում շատ ավելի լավ է պատկերված հայ ուսուցչի խղճալի վիճակը, քան ուրիշների մի քանի ծավալուն գրվածքները «Հայ վարժապետների կյանքից»։

Շիրվանզադեն համամիտ լինելով հանդեսի խմբագրի հետ, որ բանաստեղծությունը տպագրվել է առանց փոփոխության, ավելացնում է, որ հակառակ դեպքում ոտանավորի հումորը կարող էր թուլանալ։

Արևելահայ առաջադեմ գրական քննադատությունը միշտ էլ բարձր է գնահատել Թաղիադյանի ստեղծագործության արժանիքները։ Մ. Պատկանյանը քննադատելով Հակոբ Կարենյանցի 1860 թվականին Թիֆլիսում գրած «Շուշանիկ» թատերգությունը «Կրիտեք Շուշանիկին» վերնագիրը կրող հոդվածում, որը տպագրվել է «Մեղու Հայաստանի» թերթի 1861 թվականի № 30-ում, բարձր է գնահատում Թաղիադյանի հայրենասիրությունը։ Մ. Պատ-

² Մ. Նալբանդյան, Երկեր, 1943, 1-ին, էջ 262։

³ Գրականության և արվեստի թանգարան, Թ. Աղատյանի ֆոնդում։

կանյանը օրինակ է բերում Թաղիազյանի հայրենասիրական բանաստեղծությունից և եզրակացնում, որ Թաղիազյանը հորդորում է հայ օրիորդներին կոմի դաշտում իրենց մազերից վիրակապ շինել այն ժամանակ, երբ կտավ կամ քաթան չեն ունենա հայ մարտիկների վերքերը կապելու համար:

Դրող, բանասեր և պատմաբան Գալուստ Շիրմազանյանը 1883 թվականի ապրիլի 20-ի նամակում՝ ուղղված Հակոբ Սեթյանին (Թաղիազյանի կնոջ եղբայրը), Թաղիազյանի մասին գրում է. «Հանգուցյալն տարի մի ի միջօրէի ճաշեր ի տան իմում... Նա մեծ ոմն էր ի մէջ հայկաբանության... Փառք աստուծո, Թաղիազյանը ոչ արբեցող էր և ոչ ծնունդ անհարազատ, և ոչ թուղթ խաղացող կամ տեր անպարկեշտ բնության»⁴:

Եթե Գ. Շիրմազանյանը մեկ տարի ապրելով նույն հարկի տակ, տեսել է Թաղիազյանի պարկեշտությունը, ապա ավելորդ է ասել, որ նրա առաջին կենսագրի արած հերյուրանքները միանգամայն թշնամական բնույթ են կրում:

Իր առանձին թերություններով հանդերձ Թաղիազյանի ստեղծագործությունները ֆանաշտվել և արժեքավորվել է նախասովետական շրջանի հայ առաջավոր բանասիրության կողմից: «Հայ գրականության պատմություն» իրենց աշխատություններում Լեոն Մանվելյանը, Հրաչյա Աճառյանը և Վրթանես Փափազյանը որոշ գաղափար են տալիս Թաղիազյանի ստեղծագործության մասին: Բոլորն էլ Թաղիազյանին համարում են 19-րդ դարի առաջին կեսի հայ մեծ բանաստեղծը, որն իր ստեղծագործություններում կամուրջ է գցում կլասիցիզմի և նոր ռեալիստական գրականության միջև: Բոլորն էլ ընդգծում են նրա ծառայությունը հայ աշխարհիկ գրականության գործում, բայց միևնույն ժամանակ նշում են, որ նա չհասավ աշխարհաբարի ճիշտ ըմբռնմանը և մնաց որպես գրաբարյան:

Հր. Աճառյանը Թաղիազյանին գնահատում է որպես հնդկահայ ամենաեռանդուն գործիչ, որպես գիտնական, բանաստեղծ, հայկաբան և մանկավարժ, որի անունը տարածված էր հեռավոր տեղեր:

Խոսելով Մ. Թաղիազյանի ստեղծագործության աշխարհիկ բնույթի մասին, Լեոն Մանվելյանն ասում է, որ մեր գրականության մեջ աշխարհիկ բովանդակությունը 19-րդ դարի առաջին կեսում մուտք գործեց Ալամդարյանի և մանավանդ Թաղիազյանի շնորհիվ:

Ականավոր պատմաբան և բանասեր Լեոն «Մ. Թաղիազյան» իր մենագրության մեջ նրան բնութագրում է որպես մի մարդ, «որի համար գրիչը եղել է ամեն ինչ կյանքի մեջ»:

Արժեքավորելով Թաղիազյանի ստեղծագործությունը, Լեոն, սակայն, միակողմանի մոտեցում է ցուցաբերում նրա վեպերը վերլուծելիս: Չտեսնելով հումանիզմի, փափավ աշխատանքի նկատմամբ սիրո արտահայտության և բարոյականության գաղափարները, որոնք ընկած են «Վեպ Վարսենկան» ստեղծագործության հիմքում, Լեոն եզրակացնում է, որ այն բարեպաշտական խոհերով խճողված և գաղափարական տեսակետից անհամակրելի մի վեպ է:

Մ. Թաղիազյանի գրական-մանկավարժական և հրապարակախոսական գործունեությունը գրավել է նաև արևմտահայ գրականագետների և մամուլի

աշխատողների ուշադրությունը Արևմտահայ բանասեր Աբրահամ Այվազյանը բարձր է գնահատում Թաղիադյանի մանկավարժական գործունեությունը:

Հնդհանրապետ ընտրվագրելով Թաղիադյանին, Ա. Այվազյանը գրում է. «Թաղիադյանց միջահասակ, սեամորուս, խայտակն, կարճաքիթ, արիասիրտ և դյուրագրգիռ անձ մէ եղած: Կատեր խորամանկությունը, խաբեությունը և նենգությունը: Ինքը հնարամիտ, արթուն, չարքաշ և աշխատասեր մարդ մը լինելով բառին ընդարձակ նշանակությամբ, չէր ուզեր դրամ հայթայթելու հոգսն ունենա. բան մը որ արդի գրագիտաց շատերուն ցանկալի է»⁵:

Մխիթարյան պատմաբան Գալեմքարյանը առանձնապես կանգ է առնում Ս. Թաղիադյանի հրապարակախոսական կարողության վրա: Նա հատկապես շեշտում է նրա՝ որպես խմբագրի ստանձնած դերը:

«Ազգասերի» էջերում մենք կարողում ենք, թե ինչպես է Թաղիադյանը խարազանում և քննադատում Մխիթարյանների օրգան «Եվրոպայի» վարքագիծը: Սակայն «Եվրոպայի» աշխատակիցները չեն կարողանում շխոսել Թաղիադյանի թերթի մասին, չեն կարողանում շարտահայտվել թերթի խմբագրի տաղանդի, գիտելիքների և ջերմ հայրենասիրության մասին:

Հովհ. քահանա Մկրյանը շատ է զբաղվել Մ. Թաղիադյանի կենսագրության և ստեղծագործության խնդրով: Բացի հրապարակի վրա գտնվող նրա գրական ժառանգությունից, Մկրյանը, հավաքել է նաև Թաղիադյանի չհրապարակված գործերը, բայց իր կենդանության օրոք հնարավորություն չի ունեցել հրապարակելու և այդ բոլորը մնացել են նրա արխիվում, մինչև, ի վերջո, 1934 թվականին տարվել են Անթիլիաս, ուր և պահվում են այժմ:

Արևմտահայ գործիչները բարձր են գնահատել Մ. Թաղիադյանի գործունեությունը: Մարսելում լույս տեսնող «Արմենիա» թերթի խմբագիրը 1890-ական թվականներին գրում է. «Թուրքիայի հայերի 1860-ի սերունդին ծանոթ էր Թաղիադյանի անունը՝ Նալբանդյանի անունին հետ մեկտեղ, մեկը Ռուսիայի հայերի գրական հորիզոնին և մյուսն ալ Հնդկաստանի հայերի գրական հորիզոնին վրա փայլող աստղեր»⁶:

Չնայած ռուլյուցիոն-դեմոկրատ և մատերիալիստ Նալբանդյանին չափավոր հայացքներով Թաղիադյանի հետ համեմատությունը տեղին չէ, բայց այն հանգամանքը, որ նրան արևմտահայ 60-ականները մեծ տեղ են տվել, ինքնին մեծացնում է Թաղիադյանի արժանիքները:

Հնդկահայ և պարսկահայ գրական-հասարակական գործիչները ևս դրական իրենց վերաբերմունքն են արտահայտել Թաղիադյանի նկատմամբ: Չկարողանալով ամբողջապես ընկալել և լուսաբանել Թաղիադյանի ստեղծագործության արժանիքները, նրանք մեծ մասամբ կանգ են առել նրա լուսավորական և մանկավարժական գործունեության վրա:

Սինկափուրի «Ուսումնասեր» թերթի ռեակցիոն խմբագիրը ինչքան էլ վատ է տրամադրված առաջադեմ գաղափարներով զինված Թաղիադյանի նկատմամբ, ինչքան էլ ռեակցիոն իր դիրքորոշմամբ ցանկանում է հարվածել առաջավոր գործչին, այնուամենայնիվ չի կարողանում իր խոսքը շասել Թաղիադյանի մատուցած ծառայությունների մասին: «Ազգասեր»-ի փակվելու

⁵ Ա. Այվազյան, «Շար հայ կենսագրությանց», հ. 3, էջ 198:

⁶ ԳԱԹ, Թ. Ա. Ֆոնդ:

առթիվ նա խոր վիշտ է հայտնում, որովհետև «Ազգասեր»-ի էջերում շատ բան էր տեսնում հայ ազատագրական շարժման մասին:

«Այո, ողբամբ սակա մահուան Ազգասերին, և ոչ ընդունայն ողբամբ քանզի նուվա կորուսաք զարձանագրութիւնս ազգային գործողութեան ի հրեղիկս և ի տար յաշխարհս, նուվա կորուսաք զպիտանի խթանս ազգային ուսումնասիրութեան և նուվա կորուսաք զվայելչագրութիւնս հմուտ քերթողի և վերատեսչի, նուվա կորուսաք զհոգին ազատագրութեան և նուվա կորուսաք զչատագովս ազգիս և զխրատիչս եղեռնագործից և անիրաւաց և ի վախճանի նուվա կորուսաք զամենայն և զամենայն զորս պիտանի էր հասարակութեան ուստի ցաւիմք և հեծեծանօք ցաւիմք զկորուստն սիրելոյն»¹:

Նոր ջուղայեցի պատմաբան Հարություն Տեր-Հովնանյանը «Պատմություն Նոր Զուղայու» գրքում բազում անգամ հիշում է գիտնական, գրող, հրապարակախոս Մ. Թաղիադյանի վաստակը:

Հետագայում նոր ջուղայեցի մանկավարժ-բանասեր Տիգրան Աբգարյանցը բարձր գնահատական է տալիս Թաղիադյանի գիտական և մանկավարժական գործունեությանը, նրան համարելով հայտնի գիտնական:

Այնուամենայնիվ այս բոլորով հանդերձ նախասովետական շրջանի հայ գրականագետները և պատմաբանները չեն տվել Մ. Թաղիադյանի ստեղծագործության և աշխարհայացքի մարդջական վերլուծությունը և գնահատականը: Այն բազմակողմանիորեն քննվել և արժեքավորվել է սովետահայ գրականագետների և պատմաբանների կողմից:

Մ. Թաղիադյանի, որպես 19-րդ դարի առաջին կեսի հայ մեծանուն գրողի, գիտնականի, մանկավարժի և հրապարակախոսի մասին գրել են սովետահայ գիտնականներ Արտ. Կարինյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Մ. Սանթրոսյանը, Ռ. Զարյանը, զրականագետ Ռ. Նանումյանը և շատ ուրիշներ:

Գրականագետ Ռ. Նանումյանը իր «Մեսրոպ Թաղիադյան» աշխատության մեջ հանգամանորեն վերլուծել և արժեքավորել է Մ. Թաղիադյանի ստեղծագործությունը, մարքսիստական գրականագիտական դիրքերից քննել և գնահատել է այն:

Արտ. Կարինյանը «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» գրքում մարքսիստական գրականագիտական դիրքերից քննել է «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» հանդեսներում եղած ողջ նյութը: Նա ցույց է տվել Թաղիադյանի հրապարակախոսական մեծ կարողությունը և հմտությունը: Կարինյանը առաջինն է մեր գրականագիտության մեջ արտահայտվել այն մասին, որ Թաղիադյանը իր «Ազգասեր»-ի էջերում կանգ է առել ղեկաբրիստական շարժման վրա: Ընկ. Կարինյանը գրում է, որ ռուսական օրիննտացիա ունենալով հանդերձ, Մ. Թաղիադյանը 19-րդ դարի 40-ական թվականներին հանդես է գալիս ցարական իշխանության քննադատի դերում:

«Այսպես թե այնպես, փաստ է, որ Թաղիադյանը առաջինն է մեր առաջավոր գրողներից կանգ առնում ղեկաբրիստական շարժման վրա: Թաղիադյանը պաշտպանելով հանդերձ ռուսական օրիննտացիան, 19-րդ դարի 40-ական թվականներին որոշակի կերպով հանդես է գալիս միաժամանակ բռնապետական նիկոլաևյան Ռուսիայի դեմ հերոսական ապստամբության դրոշ

¹ Գ. Դաւեթբարյան, Պատմություն հայ լրագրության, էջ 80:

բարձրագույն «ազնվական ուղղություններն են» արձագանքող հրապարակախոսի դերում»⁸։

Արտ. Կարինյանը ցույց է տվել Մ. Թաղիադյանի աշխարհայացքի էվոլյուցիան, նշել, որ աստիճանաբար զարգացրել է իր գաղափարները և երբեմնիքի թե շատ անգլիական հակում ունեցող և մեծատոմսների հետ որոշ հույսեր կապող Թաղիադյանը հետագայում քննադատում է անգլիական և եվրոպական կապիտալիզմը, խարազանում հայ մեծատոմսներին և ցույց տալիս ցարական փշխանության դաժան ճնշումը աշխատավոր գյուղացիների նկատմամբ։

Արտ. Կարինյանը միաժամանակ քննադատական մոտեցում է ունենում մինչ սովետական գրականագիտության նկատմամբ՝ Մ. Թաղիադյանի ստեղծագործությանն զնահատման գործում։ Նա գտնում է, որ օգտվելով Թաղիադյանի ստեղծագործության մեջ եղած հակասական երևույթներից, բուրժուական և կղերական բանասերները աշխատել են ազավազել այն։

Մանկավարժ Մ. Սանթրոսյանը իր «Թաղիադյանը մանկավարժ» գրքում սովետական մանկավարժության նոր լույսի տակ է բացահայտում Թաղիադյանի մանկավարժական գործունեությունը։ Նա նշում է Թաղիադյանի կատարած մեծ ծառայությունը հայ մանկավարժության զարգացման ասպարեզում։

Խոսելով Թաղիադյանի առաջավոր գործունեության մասին և ցույց տալով, որ նա առաջինն է անդրադարձել ղեկաբրիստական գրականության հարցերին հայ մամուլում, պատմաբան Մ. Ներսիսյանը նույնպես շեշտում է այդ կարևոր փաստը։

Գրականագետ Ռ. Զարյանը ճշմարտացի զնահատելով Թաղիադյանի ստեղծագործությունը, միաժամանակ տեսնում է նրա ստեղծագործության և՛ առաջավոր, և՛ հետադիմական կողմերը։ Այն, որ Թաղիադյանը պայքարելով աշխարհիկ գրականության համար, այնուամենայնիվ չհասավ աշխարհաբարի բմբուխներ և հետևեց դրաբարին։

Խոսելով 19-րդ դարի առաջին կեսի հայ գրականության վիճակի մասին, վեր հանելով Մխիթարյան գրականության կրոնական և կլասիկական բնույթը, Ռ. Զարյանը բարձր է գնահատում Խ. Աբովյանի, Հ. Ալամդարյանի և Մ. Թաղիադյանի ստեղծագործությունները։ «Խ. Աբովյան» աշխատության մեջ նա անդրադառնում է Թաղիադյանի գրական ժառանգությանը և ցույց տալիս նրա կողմից առաջ քաշված այն նոր խնդիրները, որոնք ճանապարհ հարթեցին հետագա մեր գրականության զարգացման համար։

Պատմաբան Ա. Հովհաննիսյանը կանգ է առել Խ. Աբովյանի և Մ. Թաղիադյանի գործունեության վրա և տեսել նրանց աշխարհայացքի միջև եղած ընդհանրությունը։ Ա. Հովհաննիսյանը բարձր է գնահատում Թաղիադյանի արձակ և չափածո ստեղծագործությունը։ «Վեպ Վարսենկան»-ի մասին Ա. Հովհաննիսյանը եզրակացնում է. «Հնարագիտության, արհեստի, մշակութային մեծարանք—ահա վեպի հիմնական գաղափարը, որով նա դուրս է գալիս ծով և մեղկ դասի մտայնության շրջանից և թևակոխում բուրժուական աշխարհայացքի շրջանը»⁹։

⁸ Արտ. Կարինյան, Անարկներ հայ պարբերական մամուլի պատմության, էջ 470։

⁹ «Խորհրդային գրականություն», 1934, № 2.—41

«Նալբանդյանը և նրա ժամանակը» մեծածավալ աշխատության մեջ անվանի գիտնականը արժեքավորում է Թաղիադյանի հրապարակախոսական և տնտեսագիտական հայացքները:

Պատմաբան Վ. Պարսամյանը «Հայ ազատագրական շարժումների պատմությունից» աշխատության մեջ վերլուծելով 19-րդ դարի առաջին կեսի հայ հասարակական կյանքում տեղի ունեցած իրադարձությունները, ցույց է տալիս ևս. Աբովյանի ու Մ. Թաղիադյանի դործունեության ու նրանց հայացքների դրական և բացասական կողմերը: Հուսավորիչ դեմոկրատ ևս. Աբովյանի և Մ. Թաղիադյանի հիմնական սլոյքարը, ասում է Պարսամյանը, պայքար էր ֆեոդալական ճորտատիրական կարգերի դեմ և պաշտպանություն՝ գյուղացիության շահերի: Վ. Պարսամյանն սպա ավելացնում է, որ այդ բոլորով հանդերձ նրանք չհասան դասակարգային պայքարի գաղափարին:

Չնայած նախասովետական և սովետական հայ բանասիրությունը, հենվելով Մ. Թաղիադյանի՝ հրապարակի վրա գտնվող ողջ ստեղծագործության և կողմնակի աղբյուրներում եղած նյութերի վրա, ջանացել է տալ նրա ստեղծագործության հիմնական պատկերը, այնուամենայնիվ այդ բոլորը տակավին ամբողջական չի կարելի համարել: Բացի գրական գեղարվեստական և հրապարակախոսական գործունեությունից, Թաղիադյանը մեզ տվել է պատմագրական, մեմուարային, թարգմանական և մի շարք այլ մնացույթ և արժեքավոր գործեր, որոնք քիչ ուշադրության են արժանացել առայսօր: Բացի այդ, տակավին զանազան արխիվներում փակված են մնում այն հարուստ գրական, բանասիրական և պատմական նյութերը, որոնք շատ բան կպատմեին հայ ազատագրական շարժման դրվագներից մեկի պատմության ամբողջական պատկերը տալու համար: Այդ նյութերի մեծ մասը գտնվում է հնդկահայ պատմաբան Մ. Սեթյանի արխիվում, Անթիլիասի կաթողիկոսարանի գրադարանում և մասամբ, թերևս, Ն. Զուլպյի Ամենափրկչյան վանքի մատենադարանում: Մնում է ենթադրել, որ վաղ թե ուշ այդ նյութերը արևի երես կր տեսնեն, որով և հնարավոր կլինի ավելի հանգամանորեն զբաղվելու Մ. Թաղիադյանի հարուստ ժառանգությամբ: